Ոստիկանության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ոստիկանության մասին 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

Կառավարության սահմանած կարգով արտաքին գործերի նախարարությանը տրամադրելու դատապարտված և հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ տեղեկատվություն՝ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար անձանց դատվածության և հետախուզման բացակայության մասին տեղեկանքներ ձևակերպելու նպատակով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: